

ՄԽԻԹԱՐ ԱՔՔԱՀՕՐ ՎԱՐՔԷՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ ԵՒ ԽՐԱՏՆԵՐ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Մխիթար Աքբաօր մասին պատմող ներկայ գրութիւնը շարադրած է Հ. Ստեփան վրդ. Եղոկիացի Պետրոսեան (1691-1756), որ 1706ին աշակերտած է Մխիթար Աքբաօր, Մեքոնի մէջ (Յունաստան), եւ շուրջ քառասուն տարի անընդհատ միասին ապրած է: Մխիթարի վերջին տարիներուն՝ եղած է անոր խոստովանահայր եւ գլխաւոր հիւանդապահ, յարատեւօրէն հետեւելով Հիմնադրին առողջական վիճակին: Ս. Ղազարէն բացակայած է միայն 1726-1730ի շրջանին, գտնուելով Պոլիս:

Գրութիւնը բուն վարժ է, այլ՝ նախ կը ներկայացնէ Մխիթար Աքբաօր առաքինութիւնները, ապա երկար բաժին մը կ'ընծայէ Մխիթար Աքբաօր խրատներուն, հուսկ՝ գլխաւորապէս կը ծանրանայ վերջին տարիներուն կրած ծանր հիւանդութիւններուն վրայ. մանրամասն ու օրագրական ձեւով կը նկարագրէ մեր Երանաշնորհ Հիմնադրին անցուցած նեղութիւններն ու տագնապները, դառն չարաչարանքները, եւ մանաւանդ անոր յայտնաբերած համբերատար համակամութիւնը՝ աստուածային կամքին, որուն ոչ միայն պատմողը, այլ նաեւ վկան է Հ. Ստեփան Եղոկիացի:

Այս բոլորը, սակայն, ներկայացուած են յանախ խառն եւ անկանոն կերպով. հաւանաբար, հեղինակը փափաքած է իր բոլոր յիշածը ներկայացնել, քուրքին յանձնել իբր ատաղձ, ապագայ սերունդներուն հաղորդելու համար Հիմնադրին առաքինութիւններն ու խրատները՝ իբրեւ հարգատ պատկեր կրօնաւորական կեանքի, խանդավառելու համար զանոնք մեծ Սեբաստացիին աստուածաբաւ օրինակով: Ունի շատ մը նորութիւններ ու մանրամասնութիւններ, մանաւանդ Մխիթար Աքբաօր վերջին հիւանդութիւններու շրջանին վերաբերող, որոնք ցարդ անծանօթ մնացած էին, եւ հետեւաբար՝ պատմականօրէն յարգի մարգարիտներ են մեզի համար:

Բնագիրը կը պահուի Մխիթար Աքբաօր երանացուցման դատի դիւանին մէջ, կրելով քիւ F 37: Գրութիւնը կատարուած է 50×37 հրդմ. մեծութեամբ 6 քերթերու վրայ, իւրաքանչիւր կողմ՝ 4 սիւնակի բաժնուած, ընդամենը՝ 48 սիւնակ, չափազանց խիտ, առանց լուսանցքի. քուրքերէն չորսը կիսուած են՝ 25×37 մեծութեամբ: Գրչութեան ընթացքին՝ նկատելի է երեք կամ չորս անգամ գիր:

Թղթածրարին վրայ, նոյնքան հին, գրուած է. «Շղագիր մասին ինչ վարուց Մխիթար Աքբաօր, թերատ բանը, իբր օրագրութիւնք կամ նախապատրաստութիւնք: Գրչութիւն խոստովանահօր նորա Հ. Ստեփան վ. Եղոկիացու»:

Ներկայ հրատարակութեան համար, ջանացինք նախ նշտել ժամանակագրական կարգը, կտորներու փոփոխ ետեւադասութեամբ, հետեւելով վանքի հին ու անտիպ ընդարձակ ժամանակագրութեան, ինչպէս նաեւ ուրիշ զանազան Հայերու օրագրութիւններուն: Միաժամանակ ստեղծեցինք նոր խորագիրներ ու ենթաբաժանումներ, պահելով եղածները, աւելի եւս յստակութիւն տալու համար ընթերցողին եւ պատմութիւն երկարութիւնն ընդհատելու: Յետոյ՝ ամբողջ գրութիւնը, յետ նոր դասաւորումի մը, այսինքն՝ յետ նոյն նիւթին հետ կապակցող պատմութիւնները քովէ քով բերելու, երեք մասերու բաժնեցինք, յապաւելով կրկնութիւնները:

Ա. — Դրուագներ՝ Մխիթար Աքբաօր կեանքէն (1715էն ստիւն), եւ նկարագրութիւն հիւանդութիւններու եւ մահուան, նիւթին հետ սերտօրէն կապուած կարգ մը խրատներով միասին: Այս մասին մէջ են բոլոր նորութիւնները:

Բ. — Նկարագրութիւն՝ Մխիթար Աքբաօր առաքինութիւններուն (անյիշատարութիւն, համբերութիւն, աստուածսիրութիւն, եղբայրսիրութիւն, այլ առաքինութիւններ): Այս մասին մէջ չկան նորութիւններ. ընդհանրապէս ծանօթ նիւթեր են, ժամանակին օգտագործուած եւ հրատարակուած՝ զանազան կենսագրականներու մէջ:

Գ. — Խրատներ Մխիթար Աքբաօր՝ զանազան առաքինութիւններու շուրջ, եօթը ենթաբաժանումներով: Նման խրատներու հաւաքածոներ կան Ս. Ղազարի դիւանին մէջ. հրատարակութեան մը պարագային, հարկ է համեմատութիւն մը կատարել իրարու հետ:

Ներկայ հրատարակութեամբ՝ ի լոյս կ'ընծայենք միայն առաջին մասը:

Լեզուն պարզ է, յանախ ստորին գրաբարի ձեւերով խառն, որոնց ամենաչնչին հպումներ կատարած ենք, երբեմն, ստիպողաբար. մերթ կը գործածէ քուրքերէն բառեր կամ վեցնետիւրէն բարբառային ձեւեր, որոնց բացատրութիւնները տուած ենք ծանօթագրութիւններու մէջ, աւելցնելով՝ ի հարկին՝ նաեւ պատմական փոփոխ տեղեկութիւններ:

Նկարագրութիւնն ունի քարմութիւն, բնականութիւն, մերթ նաեւ կարեկցութիւն շարժող ոյժ եւ հաղորդականութիւն: Ընթերցողը մերթ կը վերապրի՝ Մխիթարի հետ՝ այդ դառն չարաչարանքները, կը լեցուի անոր համակամ եղբիւր, մերթ կը յուզուի՝ հեղինակին հետ, եւ աստուածսիրութեան հրդեհով կը բռնկի իր սիրտն ալ՝ կարգ մը տեսարաններու դիմաց:

Հ. Ստեփան Եղոկիացի հոգեկան անհուն սիրով կապուած է Մխիթար Աքբաօր հետ, եւ այդ սէրն է որ կը փոխանցէ իր յաջորդներուն, այս պարզունակ՝ բայց հոգեւոր տոգորով:

Հրտ. Հ. Ն. Տ. Ն.